ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
БИОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ АРМЕНИИ

XXXIV, 6, 650—654, 1981

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՄԵՂՐԻ ԵՎ ՄԵՂՐԱՄՈՄԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ԲԺՇԿԱՊԵՏ ԱՄԻՐԴՈՎԼԱԹ ԱՄԱՍԻԱՑՈՒ ԴԵՂԱՏՈՄՍԵՐՈՒՄ

Ա. Օ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հոդվածում ձեռագրերի հիման վրա ներկայացված են մեղրի և մեղրամոմի բուժական կիրառությունը միջնադարյան հայ բժշկապետ Ամիրդովլաթ Ամասիացու դեղատոմսերում։ Տարիների մեր պրպտումների շնորհիվ գտնվել ու օգտագործվել են այդ դեղատոմսերում առաջարկված բույսերը ու այլ նյութեր, որոնք մեղրի և մեղրամոմի հետ կիրառելով կյանքում՝ ժողովրդական բժշկության մեջ, տվել են բավական լավ արդյունք։

Բանալի բառեր: Միջնադարյան դեղատոմսեր, մեղր, մեղրամոմ:

Դեռ վաղ միջնադարից հայ բժշկության դեղատոմսերի բաղադրության մեջ, որպես սպեղանի, ուրույն տեղ են ունեցել մեղրը, մեղրամոմն ու մեղվաթույնը։ Մեղրն ու մոմը օգտագործվել են նաև Ամիրդովլաթ Ամասիացու բազմաթիվ դեղատոմսերում։ Այդ մասին վկայություններ կան Մատենադարանի № № 411, 413 և հատկապես № 414 ձեռագրերում, որոնք հետագայում հրատարակվել են։ Դրանք Փոքր Ասիայի XV դ. հայտնի բժշկապետ Ամիրդովլաթ Ամասիացու բժշկարաններն են։ Նրա բազմաթիվ աշխատություններից հիշատակության արժանի են «Օգուտ բժշկութէան», «Անդիտաց տնպէտ», «Ախրապատին» գործերը, որոնցում Ամասիացին տվել է հիվանդությունների պատմությունը, նրանց առաջացման պատճառները, ախտորոշել է դրանք և առաջարկել է հիվանդությունների բուժման դեղատոմսեր։ Ամասիացին քաջատեղյակ է եղել Հիպոկրատեսի և Դիոսկորիդեսի, Ռուֆոսի, Գալենոսի, Ռազիի ու շատ-շատերի աշխատություններին, որոնց անունները նա հիշատակում է իր դեղատոմսերում, ինչպես նաև օգտվել է այդ ժամանակաշրջանում հրապարակի վրա գտնվող հայ մեծանուն բժշկապետ Մխիթար Հերացու աշխատություններից։

Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութէան» աշխատությունը բաղկացած է երկու մասից և 223 գլխից։ Հեղինակն այն գրել ու ավարտել է 1466—69 թվականներին։ Այստեղ առաջարկված դեղատոմսերում իր համեստ տեղն ունի նաև մեղվի արտադրանքը։

Ամիրդովլաթ Ամասիացին միջնադարի ամենագիտակ ընկալվող բժշկապետն է, որն իր դեղատոմսերում առաջարկված նյութերը ներկայացրել է բազմաթիվ լեզուներով։ Մենք դրանց մեծագույն մասը փորձել ենք կյանքում։ Այսպես, օրինակ, մազի ճեղքվելու, անժամանակ թափվելու և անժամանակ սպիտակելու դեմ Ամասիացին առաջարկում է. «Առ ծովու փրփուր և բացվենեկի մոխիր և հոռոմ ձէթ որ հին լինի, շաղվէ և օծէ շատ օգուտ է... կամ-զտաֆնուն պտուղն քացխով տրորես և կարեցն չաք ի յանձն օծէ ի

մաղն՝ նա մաղն աղեկ այէ և պայծառ։ Եւ թէ մոմն և եղն յիրար խառնէ և օծէ հանապազ՝ նա օգտէ և մաղ բերե աղեկ» [1, էջ 111]։ Եվ իրոք, երբ ծովի փրփուրը, օշինդրի մոխիրը, ձիթապտղի ձեթը և մեղրը շաղախում ու քսում ենք մազերին կամ դափնու պտուղի, քացախի ու մեղրի խառնուրդով, կամ մոմի ու յուղի խառնուրդով մշակում ենք մազերը՝ նախ գլուխը մաքրվում է թեփից, ապա մազերը թարմանում, փափկում, շատանում ու փայլ են ստանում, ինչպես նաև կանխվում է մազերի ծայրերի ճեղքվելը։

Հաճախ ստամոքսի ցավին ուղեկցում է նաև գլխացավը, որի պատճառը սննդի ռեժիմի խախտումն է։ Նման ցավերը դադարում են խնձորի, պղպեղի, տարապղպեղի, սմբուլի, մեղրի և գինով եփուկն ընդունելիս [1, էջ 134]։

Գլխի, ձեռքի և մարմնի այլ մասերի դողոցների ժամանակ Ամասիացին խորհուրդ է տալիս ընդունել վարդի մուրաբան մեղրով ու գոլ ջրով կամ փիճի ծառի սերմը մեղրի հետ. Պարալիչի ժամանակ «տուր ամէն օր ժ դրամ. վարդի մուրապայ տրորէ տաք ջրով և այարիճ (լուծողական) տուր մեղրով, օգտէ» [1, էջ 169]։

Ձեռքի և գլխի դողալու դեմ՝ «ղճալղուզան յիստակէ և ծեծէ և մեղրով շաղվէ և տուր որ ուտէ անօթիեց գ դրամ ամեն օր» [1, էջ 180]։

Աչքի կատարակտը վերացնելու համար առաջարկում է. «Կրիայի ծիրտն մեղրով շաղվէ և ի վերայ դիր» [1, էջ 206]։

Ականջի ցավերը հանգստացնում են խակ խաղողի և մեղրի, լրթախոտի ու մեղրի խառնուրդները։ Խողությունը բարվոք է դարձնում ձիթապտղի, զանձլամների արմատի (վրաց կոճ) և մեղրի եփուկը. «Ազոխի ջուր և մեղր հալէ և կաթեցու յականջն, և մամիսայ տրորէ և մեղր խառնէ և դիր յականջն» [1, էջ 228]։ Իսկ ականջի շլսելու ժամանակ՝ «Քանի մի հատ ձիթապտուղ և խարպախ և մեղրով եփէ և ի վերայ ականջին դիր» [1, էջ 232]։

Ճաքճքված շուրթերի համար առաջարկում է. «Հաւու և սագու եղ, և իսպիտակ մոմ հալէ և օծէ» [1, էջ 243]։ Նման բաղադրությամբ մահլամը արագ փափկացնում և բուժում է շուրթերը։

Կոկորդը ցավելիս Ամասիացին առաջարկում է մանանեխի և մեղրաջրի խառնուրդով օգտագործում՝ «Առ մանեխ և դրամ. ծէծէ և ա լիտր մեղրաջուրն խառնէ և խաղաջ արա...» [1, էջ 272]։

Հարբուխի ժամանակ առաջարկում է հետևյալ դեղամիջոցը. «ղկտաւատն ծէծէ և խոնկ խառնէ և մեղրով շաղվէ և տուր [1, էջ 242]։ Հարբուխին շատ արագ օգնում է այս շաղախը, երբ այն օրը մի քանի անգամ տարվում է քթի մեջ և բսխում բթանցքերին։

Աստամից և լնդերից արյուն գալու ժամանակ օգտագործել ենք բժշկապետի առաջարկած հետևյալ բաղադրությունը. «առ շիբ բ դրամ, աղ ա դրամ, սղկէ և մեղրով շաղվէ. յառաջ գլինտն լվա տաք ջրով որ արիւնի և յետոյ քսէ ի վերայ լինտին քանի մի անգամ. աղատի» [1, էջ 249]։ Մեր պրակտիկայում այս դեղատոմսը տվել է լավ արդյունք։

Երիզորդը թափվում է վայրի բակլայի, օշինդրի և մեղրի խառնուրդով. «Թրմուս և օշինդր ծէծէս և մեղրով շաղվէս և տաս, զճիճին սպանէ և ձգէ» [1, էջ 366], իսկ թութքին շատ է օգնում ձվի դեղնուցի, եղնիկի ուղեղի, հավի յուղի, գազի խեժի, նուշի, օփիումի, հայկավի, սպիտակ մոմի և ձիթայուղի խառնուրդը. «Հաւկթի դեղնուց և պախրու ըղուղ և հաւու ճրագու և քիթրայ և նշայ և աֆիոն և հայկաւ և իսպիտակ մոմ և ձէթ խառնէ և մորհամ

արա և օծէ, ի ցաւուն տեղն»։ Կամ՝ «դեղին մոմ և խիրոյ ձէթ և սուսանի ձէթ և հաւու ճրագու ա բաժին, և քիթրայ տրորած կէս բաժին, զամենն յիրար խառնէ և օծէ» [1, էջ 371]։

Նկատելի արդյունք են տվել երիկամների, միզափամփուշտի, միզուղիների հիվանդությունների դեպքում Ամասիացու առաջարկած դեղամիջոցները, որոնք հարկ է ընդունել բաղնիքում կամ ձի նստելիս, որպեսզի ցնցումների միջոցով այդ օրգանների քարերը թափվեն. «առ հաւու ճրագու և մանուշկի ձէթ և իսպիտակ մոմ, յիրար խառնէ և օծէ ի տեղին և աւազան նստի» [1, էջ 378]։ Իսկ մանր քարերի և ավազի դեպքում՝ «առ կտուած սեխի հունդ և նախու և քամոն և կարօսի հունդ և բողկի, հունդ և լեղի նուշ գգ դրամ, զամէնն աղա և մաղէ և տուր բողկի ջրով և տուր սիսռան ջուր և հոռոմ ձէթ և ապքամայ, և ըռազան և կապարի կեղև, կեր և մուտ ի բաղնիս և աւազան նիստ, քալուկ ձի հեծիր որ թոթվէ, և այս ամէն զքարն երիկամայն հանէ» [1, էջ 382]։

Երբ միզափամփուշտում քար կա՝ «մեղրաջուր և իսպիտակ շաֆն կաթով տրորես և անդամով ներս ղրկես»։

Միզապարկի թարախի դեպքում՝ «առ զուկի ձէթ ա դրամ և կաքուս ճրագու գ դրամ և իսպիտակ մոմ ժ դրամ, զամենն յիրար խառնէ և մորհամ արա և հանապազ օծէ ի բուշտն» [1, էջ 384]։

Մեզկապի ժամանակ՝ «առ քապուլի և ամլաճ և պալիլաճ եե դրամ զամէնն աղա և մաղէ և մեղրով շաղէ և գ դրամ դարբնի ջրով» [1, էջ 389]։

Բժշկապետը խիստ կարևոր և պիտանի բուժամիջոցներ է առաջարկում կանացի հիվանդությունների՝ դաշտանի խախտման, արգանդի բորբոքումների, վիժելու, չբերության դեպքերում։ Այսպես, օրինակ, դաշտանի կանոնավորման համար գրում է. «առ կարօսի հունդ և անիսօն և ըռդիան և դաղձ զամէնն աղա և մաղէ և տուր մեղրով և սիսռան ջրով» [1, էջ 412]։ Արգանդի բորբոքման և խոցի դեպքում՝ «գարեջուր տուր և մեղրով հոկնայ արա և թե հուլպայ, ոսպ, տուղտը ջրով եփէ ժ դրամ մեղր խառնե և եղկ հոկնայ արա» [1, էջ 416]։ Վիժելու դեմ՝ «քամոն և կարօսի հունդ և անիսոն և ըռդիան ծէծէ և տուր ա մխթալ մեղրով» [1, էջ 425]։ Չբերության դեմ՝ «զաֆրան և սմպուլ և աքլիլմէլիք աա դրամ, սատէճ և զրտմանա ժ ժ դրամ, սագու, հաւու և այծու ճրագու և հաւկթի դեղնուց եփած բբ նուկի, զամէնն յիրար խառնէ և մորհամ արա և ներս տար և յէրիկն ի մոտն երթայ» [1, էջ 427]։

Գրքում առաջարկվում են նաև մի շարք մահլամների դեղատոմսեր, կնոջ կրծքի բորբոքումների, սակավ կաթի հորդացման, մատնաշունչի ու կարմիր քամու (խումբա) բուժման համար։ Այսպես՝ երբ կնոջ կուրծքը ցավում է և կաթ չի գալիս, բուժման համար առաջարկվում է. «առ մոմ և մանուշկի ձէթ և հաւկթի դեղնուց, զամէնն որպես մորհամ արա և օծէ ի վերան»։ Երբ միաժամանակ արյուն է կապվում կրծքի մեջ՝ «բակլայի ալուր մեղրով մորհամ արա և օծէ, և տաք ջուր լից և քիչմն հոռոմ ձէթ խառնէ» [1, էջ 433]։

Ամիրդովլաթ Ամասիացին իր հաջորդ՝ «Անգիտաց անպէտ» աշխատությունը գրել և ավարտել է 1478—82 թվականներին, որը 1926 թվականին հրատարակել են Վիեննայի Մխիթարյանները (հրատարակիչ Կ. Բասմաճյան)։ Այստեղ ներկայացված է 3754 դեղատոմս, որոնցում նույնպես կան մեղրի ու մեղրամոմի օգտագործման փաստեր։ Օրինակ՝ Երեսի մաշկի մաքրման համար առաջարկվում է. «Ասլուսան թէ ծէծէն եւ մեղրով շաղեն եւ երեսն աւ-

ծեն, օգնէ մանին, սպինին, որ ի երեսն լինիւ [2, էջ 26]։ Այս, վառվառուկի ու մեղրի խառնուրդը, ինչպես նաև դեղին մոմի, սուսամբարի ու եղրևանու յուղով մահլամը մաքրում է երեսի ցաները, սպիների հետքերը. «դեղին կամ կարմրժեռ մոմն դամպաղի ձիթով եւ յեսամինի ձիթով խառնես եւ յերեսն ածես՝ խիստ պայծառ առնէ եւյիստակ» [2, էջ 427]։

Ջղաղարող լույծի դեպքում շատ է օգնում մեղրի, վարդի յուղի և գինու խառնուրդի օգտագործումը. «եւ մեղր եւ վարդի ձէթ եռցնեն եւ խմցնեն, եւ գինի խմցնեն» [2, էջ 28]։

Գլխի թեփի մաքրման համար «Անգիտաց անպէտ»-ում նույնպես կա դեղատոմս։ Այն է. «խաթմին (տուղտն) եփես ջրով և մեղրաջրով գլուխ լվանաս»։ Սույն ջուրը եթե բացախով քսեն մեղվի կծած տեղը այն և չի ցավի և չի ուռչի [2, էջ 215]։

Ականջի շրջանի բորբոքումների, ականջի ցավերի համար Ամիրդովլաթ Ամասիացին այստեղ էլ ունի ցավազրկող և բուժող դեղամիջոցներ. «զմոմն եղով հալեն, եւ դ շաբաթ յարեւն դնեն, եւ ականջթոռքն ուռեց կենայ, ածես, ազատէ» [2, էջ 427]։ Ինչպես նաև՝ «զմեղր, զեղն, վարդի ձիթով եւ հին գինով խառնես, եւ յականջն կաթեցնես, զցաւն տանի» [2, էջ 279]։

Ամիրդովլաթ Ամասիացու այս գրքում նշված է նաև մեղրի մեկուսիչ և հականեխիչ հատկության հասին, որ մեղրով կարելի է երկար ժամանակ պահել նյութեր, մթերքներ, նույնիսկ մեռած մարդու՝ անփոփոխ վիճակում. «թէ զմեռած մարդն ի մեղրն թաղեն՝ չի վնասի» [2, էջ 380]։

1431 թվականին Կ. Պոլսում Ամիրդովլաթ Ամասիացին գրում է «Ախրաբատին» երկու մասից բաղկացած աշխատությունը՝ Ախրաբատին (դեղագործություն և Մուֆրատաթին (դեղագիտություն)։ Այստեղ ևս նա բազմաթիվ դեղատոմսեր է առաջարկում, որոնցից հիշենք միայն մեղվի արտադրանքի հետ կապված մեկ մահլամ, որը հիանալի բուժում է կրակով կամ եռացած ջրով այրվածքները. «առ խունկ, նունուֆարի տակ, գառնալեզու, հաւկիթի խպիտակ, շիրիկ ձեթ, աղ, ոսպան ալյուր, բացախ, մոմ, կաթ, վարդի եղ, քացախով մորհամ արա դիր վերան» [3, էջ 1ա]։

Տարիների մեր պրպտումները Ամասիացու դեղատոմսերում նշված բույսերի և այլ նյութերի պարզաբանման ու դրանք ժողովրդական բժշկության մեջ կիրառելու գործում տվել են բավական լավ արդյունք։ Այսօր մենք դրանք համարձակ օգտագործում ենք որպես բուժամիջոցներ։

ՀՍՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Ստացված է 2.II 1981 թ.

ПРИМЕНЕНИЕ МЕДА И ВОСКА В РЕЦЕПТАХ СРЕДНЕВЕКОВОГО АРМЯНСКОГО ВРАЧА АМИРДОВЛАТА АМАСИАЦИ

А. О. ГАСПАРЯН

В статье представлено целебное применение меда и воска по рецептам средневекового армянского врача Амирдовлата Амасиаци.

Благодаря нашим исследованиям уточнены и используются предложенные в рецептах растения, цветы, корни и другие средства, которые

в применении с медом и воском дали хорошие результаты при лечении некоторых болезней.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ամիրտովլաթ Ամասիացի, Օգուտ բժշկութէան (բժիշկ Պունիաթ Սեբաստացու խմբագրած), խմբագրութեամբ Ս. Մալխասեանցի, Երևան, 1940։
2. Ամիրտովլաթի Ամասիացւոյ, Անգիտաց անպէտ կամ բառարան բժշկական նիւթոց, Վիեննա, 1926։
3. Մ.Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 414։